

**ԿՈՆՍՏԱՆԴԻՆ ՍԵԼԻՔ – ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆԻ (ՏՄԲԼԱԶԻ ԽԱԶԱՆ)  
ԺՈՂՈՎՐԴԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ**

XIX դարի վերջին քառորդին, եվրոպական առաջավոր երկրների բանագիտական մտքի ազդեցությամբ, հայ հասարակական միտքը սկսում է կարևորել մեր ժողովրդի բանավոր ստեղծագործությունների գրառման, հրապարակման և հետազոտման պատմամշակութաբանական անհրաժեշտությունը: Մ. Միանսարյանցի, Գ. Սրվանձտյանցի, Գ. Շերենցի, Հ. Ճանիկյանի, Տ. Նավասարդյանի, Մ. Բարխուդարյանի, Գ. Տեր-Ալեքսանդրյանի և ուրիշների բանահյուսական ժողովածուները, մեր ազգային հերոսավեպի՝ «Սասնա ծռերի» պատումների հայտնաբերումն ու տպագրությունը և Վենետիկի Մխիթարյանների կողմից մեր բանահյուսական ավանդության գիտական ու մշակութային արժեքավորումը խթանում են նոր սկզբնավորվող հայ բանագիտության զարգացումը: Ինքնարտահայտման այդ գործընթացի մեջ իր ուրույն տեղն ունենում են Արցախի պատմազգագրական շրջանը: Արցախի բանահյուսության գրառման պատմությունը պետք է սկսել 1860 թվականից<sup>1</sup>: Խոսքը հայ մշակույթի պատմության մեջ որոշակի դեր խաղացած հայտնի Բահաթրյան ընտանիքի<sup>2</sup>, Պըլը Պուղու մասին ստեղծված երգիծական զրույցների և մանրապատումների առաջին հավաքող և հրատարակող Գ. Շերմազանյանի<sup>3</sup>, Արցախի բանահյուսության հավաքման

<sup>1</sup> Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 15, Երևան, 1985, էջ 11:

<sup>2</sup> ՀՀ ԳԱՍ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսական արխիվ (այսուհետև՝ ԲԱ), FBI: 0808-0961, 3683-3765:

<sup>3</sup> Գ. Շերմազանյան, Անեկոտներ, զվարճալի զրույցներ, համառոտ դեպքեր և առակներ մեծ մասամբ ազգային կյանքից առած, Թիֆլիս, 1878:

և հրատարակման գործի երախտավոր Մ. Բարխուդարյանի<sup>1</sup> և այլոց մասին է: Այս ամենը վկայում է Արցախում բանահյուսության նկատմամբ ստեղծված շահագրգիռ ու համակրական վերաբերմունքի մասին: Ժողովրդագիտական ուսումնասիրությունների և հրատարակությունների այս նպաստավոր մթնոլորտում, ուր ներգրավված էին հայ հասարակության լայն շրջանները, XIX դարի վերջին քառորդին ժողովրդական բառ ու բանով հագեցված ֆելիետոններով սկսեց իր գործունեությունը Կ. Մելիք-Շահնազարյանը (1857-1940):

Տմբլաչի Խաչանը Կ. Մելիք-Շահնազարյանի խոսափող հերոսն է, ով վայելում էր Արցախ պատմազգագրական շրջանի աշխատավոր ժողովրդի սերն ու համակրանքը, որովհետև բնիկ շուշեցի լինելով՝ քաջատեղյակ էր Շուշիի իրական-հրապարակային կյանքին, ժողովրդի նիստուկացին, ապրումներին, ազգային տենչերին ու իղծերին:

Կ. Մելիք-Շահնազարյանի կյանքը, գրական, մանկավարժական, գյուղատնտեսական, հասարակական գործունեությունը հնարավոր չէ զատել նրա ժողովրդագիտական գործունեությունից, որովհետև քառասուն տարիների ընթացքում շրջելով Անդրկովկասի գրեթե բոլոր շրջանները՝ նա ոչ միայն նպաստել է գյուղատնտեսական նորագույն ճյուղերի արմատավորմանը, այլև հընթացս զբաղվել է բանահյուսական-ազգագրական նյութերի հավաքչությամբ:

Կ. Մելիք-Շահնազարյանին ճանաչում է բերել 1900-1901 թթ. Բաքվում լույս տեսած երգիծական ֆելիետոնների «Ձուռնա - Տմբլա» երեք գրքից բաղկացած ժողովածուն, որը լրացվում և վերահրատարակվում է 1907-1908 թթ. Վաղարշապատում (այժմ՝ Էջմիածին): Վերոհիշյալ ժողովածուի Ա և Բ գրքերում Շուշիի կյանքը հրապարակային քննարկման է ենթարկվում արցախահայերի մտավոր ու տնտեսական կյանքի կենտրոն համարվող «Թոփխանա» հրապարակում, որտեղ հարգվում էր ժողովրդական դիպուկ խոսքը, հումորը և հաջող սրախտությունն արդեն իսկ պատռում էր նեղ - թոնրատնային մտածողության սահմաններն ու տեղական շրջանակները, բերնեբերան շրջում Արցախում:

---

<sup>1</sup> «Բարոյական առածներ», հավաքագրեց ուստա Գևորգ Բարխուդարյանց, Տփլիս, 1898 (Մակար Բարխուդարյանը և ուստա Գևորգ Բարխուդարյանը նույն անձնավորությունն է):

Խաչանը ունի մականուն՝ Տմբլաչի, որը նախ նրա զբաղմունքն է մատնանշում և ապա՝ բանահյուսական էությունը: Խաչանը գուսան է, զուռնաչի, տմբլաչի, մունետիկ, ազդարար: Ուրեմն, զուռնան ու տմբլան Խաչանի՝ Ղարաբաղի բարբառով գրած երգիծական ստեղծագործությունների պատկերավորման հիմնական միջոցներն են: Հանրահայտ է, որ զուռնան ու տմբլան արցախահայերի հարսանեկան համակարգի հիմնական նվագարաններն են, որոնց ընտրությունը պետք է բացատրել ոչ թե 4. Մելիք-Շահնազարյանի նախասիրությամբ կամ պատահական շարժառիթներով, այլ մեր ժողովրդի երաժշտակատարողական մտածողության յուրահատկությամբ, այդ նվագարանների գործառույթներով և խորհրդանշային ընկալումներով:

Դատելով 4. Մելիք-Շահնազարյանի անձնական ֆոնդում պահպանված ձեռագրերից՝ վերջինիս ժողովրդագիտական ժառանգությունը բազմաժանր ու բազմաբնույթ է. հեքիաթներ, զրույցներ, անեծք-օրհնանքներ, առածներ, հանելուկներ, շուտասելուկներ, բարբառային բառերի բացատրական բառարան, ժողովրդական բժշկության վերաբերյալ նյութեր և այլն: Ժողովրդագետի գրի առած նյութերի մի մասը անտիպ<sup>1</sup> է, մասամբ տպագրվել են առավելապես առանձին ժանրային համահավաք ժողովածուներում<sup>2</sup> և «Հանդես ամսօրայի» էջերում: Ավելորդ չենք համարում նշել, որ նույն հեղինակի ազգագրական բնույթի նյութերը ևս տեղ են գտել հանդեսում<sup>3</sup>: 4. Մելիք-Շահնազարյանի հավաքածուի մի մասը վիպական բանահյուսության նմուշներ են՝ հեքիաթներ և զրույցներ, որոնք ներկայացված են կենդանական, իրապատում կամ կենցաղային երգիծական դիպաշարերի տեսքով և հիմնականում

---

<sup>1</sup> ԲԱ, ԲԲ II 2904-3175; Գրականության և արվեստի թանգարան (այսուհետև՝ ԳԱԹ), 4. Մելիք-Շահնազարյանի ֆոնդ, գգ. 70, 96:

<sup>2</sup> Ղարաբաղի բարբառներ, «Հանդես ամսօրայ» (այսուհետև՝ ՀԱ), 1928, էջ 552-559, ՀԱ, 1928, էջ 475-478, Հանելուկներ Ղարաբաղի լեզվով, ՀԱ, 1930, էջ 596-601, Առակներ Ղարաբաղի բարբառով, ՀԱ, 1930, էջ 359-362, ՀԱ, 1931, էջ 246-252, Նյութեր Ղարաբաղի ազգագրության համար, ՀԱ, 1932, էջ 331-338, Ա. Ղանալանյան, Առածանի, Երևան, 1960; Ս. Հարությունյան, Հայ ժողովրդական հանելուկներ, Երևան, 1965, Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. VI, Երևան, 1973:

<sup>3</sup> Բուրդ զգելը և գորգ գործելը Ղարաբաղում, Ազգագրական ծանոթագրություններ, ՀԱ, 1928, էջ 475-478:

Ասրնե Թոմփսոնի<sup>1</sup> հեքիաթային տիպերի միջազգային համացույցի AT 2032 A տիպին պատկանող կոմուլյատիվ (կուտակային) հեքիաթներ են:

Բանահավաքչական գործունեությունից զատ Կ. Մելիք-Շահնազարյանը գերմաներենից թարգմանել է կենդանական հեքիաթներ<sup>2</sup> (Գրիմ եղբայրներ, Ա. Շվաբե, Պ. Շմիդտ)՝ կարևորելով չարի դեմ մղված տևական պայքարում բարու հաղթանակը, ինչն էլ տարբեր նրբերանգներով դրսևորված է գրեթե բոլոր ժողովուրդների հեքիաթներում: Նույնը կարելի է ասել «Սկներն ու դավաճան կատուն», «Ընծառյուծն ու ոչխարը», «Սներգուրդչկան և աղվեսը», «Աղքատ աղվեսը» ռուսերենից կատարած թարգմանությունների մասին<sup>3</sup>: Թարգմանելով և փոխադրելով ֆրանսիացի մեծ բանաստեղծ, երգիծարան Լաֆոնտենի առակներից մի քանիսը<sup>4</sup>, որոնցում գործող անձինք հանդես են գալիս այս կամ այն կենդանու կերպարանքով, Կ. Մելիք-Շահնազարյանը դարձյալ օգտագործում է Ղարաբաղի բարբառի արտահայտչական հնարավորությունները:

Բանահավաք Կ. Մելիք-Շահնազարյանի ֆոնդում պահպանվում են նաև Ղարաբաղյան օրհնանքի<sup>5</sup> (118) և անեծքի<sup>6</sup> (214) մուշներ: Անեծքի ձեռագիր մուշները գրի են առնված 1870-1880 թթ. «Ղարաբաղցիների հայիոյանքը» վերնագրի տակ<sup>7</sup>: 1928 թ. հրատարակվում է Կ. Մելիք-Շահնազարյանի բանահյուսական հավաքածուի մի մասը «Ղարաբաղի բարբերեն» վերնագրով, որը ներկայացնում է օրհնության և անեծքի մուշների մի փունջ<sup>8</sup>:

Քաջածանոթ լինելով մայր ժողովրդի լեզվամտածողությանը, հոգևոր մշակույթին՝ նա բարբառով գրած իր երգիծապատումներում հմտորեն է կիրառում ժողովրդական բառ ու բանը, անգամ ծիսական

---

<sup>1</sup> Ասրնե Թոմփսոն, «Ժողովրդական հեքիաթների տիպերը»: Ձեռագիրը՝ ԳԳ ԳԱԱ Զնագիտության և ազգագրության ինստիտուտում (գործավարական թարգմանություն):

<sup>2</sup> ԳԱԹ, Կ. Մելիք-Շահնազարյանի ֆ., գգ. 61, 70:

<sup>3</sup> ԳԱԹ, Կ. Մելիք-Շահնազարյանի ֆ., գգ. 58, 70:

<sup>4</sup> Տմբլաչի Խաչան, Զուռնա-Տմբլա, գ. Բ, Վաղարշապատ, 1908, էջ 148, 182:

<sup>5</sup> ԳԱԹ, Կ. Մելիք-Շահնազարյանի ֆ., գ. 94:

<sup>6</sup> Անդ, գ. 93:

<sup>7</sup> Ժանրի այսօրվա ըմբռնմամբ հավաքածուի մուշները հայիոյանք չեն, այլ անեծքներ:

<sup>8</sup> Ղարաբաղի բարբերեն. Ղարաբաղցիների օրհնությունը, Ղարաբաղցիների անեծքը, ժողովրդական ասույթներ, ԳԱ, 1928, էջ 552-559:

բանահյուսության նմուշները, զորօրինակ՝ «Ճուլին»<sup>1</sup>, ինչը ջրի աստվածության հնագույն պաշտամունքի հիշողությունն է՝ պահպանված բնաշխարհի հայոց կենցաղում<sup>2</sup>:

Ժողովրդագիտական որոշակի արժեք ունեն Կ. Մելիք-Շահնազարյանի հավաքած նյութերը՝ Արցախում գործադրված կախարհության և գուշակության ձևերի մասին՝ «կոռնը չափել», «վախը եր քաղել», «սրտըմնա փռնել», «ջամի մեջ ճյուր լցնել», «կյարի քցել», «տենակ քցել» և այլն<sup>3</sup>:

Պակաս ուշագրավ չեն բանահավաքի գրառած ժողովրդական բժշկության վերաբերյալ նյութերը՝ «Տնային բժշկությունը Ղարաբաղում»<sup>4</sup> (1870 թ., 18 թերթ), «Առտնին բժշկությունն»<sup>5</sup> (1874-1880 թթ., 20 թերթ), «Հիվանդությունների դեմ Ղարաբաղում ժողովրդական ճարեր»<sup>6</sup> (1879-1906 թթ., 8 թերթ): Այս ձեռագիր նյութերում տեղեկություններ կան բուժման ֆիզիկական եղանակների մասին (բուժում ոսկրացավի և ատամնացավի դեմ, քթի արյունը կանգնեցնելու, այրվածքը բուժելու, գլխացավը կանխելու և այլն):

Կ. Մելիք-Շահնազարյանը կազմել է բարբառային բառերի բացատրական բառարաններ՝ «Հավելված Ղարաբաղի լեզվի բառերի»<sup>7</sup> (1880 թ., 26 թերթ), «Ղարաբաղի բառարանի հավելյալ թերթեր»<sup>8</sup> (14 թերթ), ուր բարբառային բառերին տրվել է գրական հայերենով բացատրություններ:

Ժողովրդագետը ռուսերենից թարգմանել է Ավստրալիայի Նոր Գվինեա կղզում նախնադարյան համայնական կարգերով ապրող մարդկանց՝ պապուասների կրոնական հավատալիքների, ծիսապաշտամունքային արարողությունների, հմայության ու տոտեմիզմի մասին պատմող «Վայրենիները»<sup>9</sup> հոդվածը, ինչպես նաև քաղվածքներ է

<sup>1</sup> **Տնրլաչի Խաչան**, Զուռնա-Տնրլա, գ. Բ, էջ 66:

<sup>2</sup> **Г. Капанця**, Историко-лингвистические труды, т. II, Ереван, 1975, с. 321-322.

<sup>3</sup> **Տնրլաչի Խաչան**, Զուռնա-Տնրլա, գ. Ա, Վաղարշապատ, 1907, էջ 98-99:

<sup>4</sup> ԳԱԹ, Կ. Մելիք-Շահնազարյանի ֆ., գ. 98:

<sup>5</sup> Անդ, գ. 99:

<sup>6</sup> Անդ, գ. 100:

<sup>7</sup> Անդ, գ. 89:

<sup>8</sup> Անդ, գ. 90:

<sup>9</sup> Անդ, գ. 59:

թարգմանել «Ղուրանի»<sup>1</sup> օրենսգրքից ամուսնական խնդիրների, դրախտի, դժոխքում մեղավորների պատժի մասին:

Վարպետորեն օգտագործելով բանահյուսական տարբեր ժանրերի գեղարվեստական հնարանքները, արտահայտչական, լեզվաոճական միջոցների առանձնահատկությունները՝ Կ. Մելիք-Շահնազարյանը Ղարաբաղի բարբառով գրած իր ֆելիետոններում կատարում է կենցաղային, հասարակական-քաղաքական, կյանքի հրատապ խնդիրներին վերաբերող այնպիսի ընդհանրացումներ, որոնք կարևորվում են մեր ժամանակների հետ ունեցած աղերսներով. «Էլ օզըն չըմ ըրզընցնիմ, իմ աչքի լուս, ըշխարքավս մին փռված մամուս ղեյրաթավ ղարաբաղցիք, իմ հույսը ծեզ երա ա, ծեր աբուռը օլմիա թա չուլը քցիք, դուդի-բուդի պեներու հետա կենաք, ծեր վաթանը մուռանաք, ծեր վառ ուջաղին երա ճուր ածիք, Ղարաբաղին անըմը կոտրիք...

Ծեր պարի կուրծերին աչքը թիքմիշ ըրած Տմբլաչի խաչան»<sup>2</sup>:

---

<sup>1</sup> Անդ, գ. 69:

<sup>2</sup> **Տմբլաչի խաչան**, Ջուռնա-Տմբլա, գ. Բ, էջ 241: